



Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

2014 թվականի գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՆՊՍՏԱԿ I. Կառավարում և վարչարարություն.....	4
ՆՊՍՏԱԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր.....	8
ՆՊՍՏԱԿ III. Որակի ապահովում	11
ՆՊՍՏԱԿ IV. Հետազոտություն	13
ՆՊՍՏԱԿ V. Միջազգային կապեր	14
ՆՊՍՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր	16
ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	17
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	189
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	246



ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթղթով ներկայացվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ԵԳՊԱ) 2014 թվականին իրականացրած գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Հաշվետու տարին արդյունավետ էր ԵԳՊԱ-ի համար: 2013 թվականի հուլիսի 16-ին ԵԳՊԱ-ի ռեկտոր Արամ Իսաբեկյանը վերընտրվելիս ներկայացրեց բարեփոխումների նոր հայեցակարգ՝ շեշտադրելով զարգացման հետևյալ ուղղությունները՝

- ԵԳՊԱ-ի կառավարման նոր մոտեցումների որդեգրում,
- ԵԳՊԱ-ի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերանայում, ուսանողակենտրոն ուսուցման որդեգրում՝ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքային մոտեցման միջոցով,
- ԵԳՊԱ-ի կողմից տրամադրած ուսուցման միջազգային ճանաչում՝ որակի ապահովման միջոցով, տեղական հավատարմագրում ինստիտուցիոնալ մակարդակով, ՄԿԾ-ների հավատարմագրում միջազգային կառույցների կողմից,
- Հետազոտության ուղղությունների վերանայում, հստակեցում և հետագա զարգացում,
- Ծառայություն հասարակությանը՝ ցուցահանդեսների կազմակերպման և մեծահասակներին կրթություն տրամադրելու միջոցով,
- ԵԳՊԱ-ի գրավչության բարձրացում,
- ԵԳՊԱ ուսանողների ուսուցմանը նպաստող միջավայրի բարելավում,
- ԵԳՊԱ-ի միջազգայնացում:

Վերը նշված նախաձեռնությունների արդյունավետ իրականացումը շարունակելով 2014 թվականին ԵԳՊԱ-ում մշակվել և մշակման փուլում են գտնվում մի շարք նոր կարգեր և ընթացակարգեր՝ միտված բուհի կառավարման համակարգի, ուսումնական գործընթացի և ուսումնական միջավայրի բարելավմանը, ուսանողների շարժունության ապահովմանը, ինչպես նաև ԵԳՊԱ գրավչության բարձրացմանը: Հետազոտությունների ուղղությունների վերանայման և զարգացման ընթացքը համակարգելու նպատակով ստեղծվել է Հետազոտական կենտրոն:



Ընդհանուր առմամբ, 2014 թվականը կարելի է բնութագրել ԵԳՊԱ-ի համար զգալի փոփոխությունների և հաջողությունների տարի, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել ԵԳՊԱ-ում բազմաբնույթ բարեփոխումներ իրականացնելու համար, ինչպես նաև բուհի կառավարման նոր մոտեցումների և որակի մշակույթի ձևավորման գործում:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ ԵԳՊԱ 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի և ռեկտորի 2013 թվականի ընտրության հայեցակարգում նշված դրույթների:

ՆՊԱՏԱԿ I. Կառավարում և վարչարարություն

Արդյունավետ կառավարումը բուհի հաջողությունների կարևորագույն գրավականներից է: Բոլոնիայի գործընթացին անդամակցությամբ պայմանավորված միջազգային մակարդակում ՀՀ կրթությունը տեսանելի դարձնելու ձգտումը անհնար է դարձնում կառավարման հին մոտեցումների կիրառումը: Բարձրագույն կրթության մատուցման նոր մեթոդները պահանջում են կառավարման նոր մոտեցումներ թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) իրականացման, և թե՛ այլ ծառայությունների մատուցման գործում: Կառավարման նոր մոտեցման կարևորագույն սկզբունքներն են՝

- ուսանողակենտրոն մոտեցում,
- որակյալ կրթության մատուցում,
- թափանցիկություն,
- հաշվետվողականության ապահովում:

Ուսանողակենտրոն միջավայր ստեղծելու նպատակով շարունակական ուսումնասիրություններ են իրականացվում թե՛ արտասահմանյան բուհերի հետ համեմատական վերլուծություններ կատարելով, թե՛ ԵԳՊԱ-ի ներքին գործոնների խորքային վերլուծության միջոցով: Վերհանված խնդիրների հիման վրա վերանայվում են ԵԳՊԱ-ի ուսումնառություն և հետազոտություն իրականացնելու մոտեցումները, այդ գործընթացներն ուսանողների համար էլ ավելի օգտակար դարձնելու նպատակով:



Թափանցիկության ապահովման առաջնային խնդիրներից է համապատասխան փաստաթղթային հենքի ստեղծումը: Այսպիսի մոտեցում է ցուցաբերվում ԵԳՊԱ-ի բոլոր գործընթացներին (ուսումնառություն, ուսանողների գնահատում, գործընթացների պլանավորում, բյուջեի կառավարում և կառավարման այլ ոլորտներ):

ԵԳՊԱ-ն կարևորագույն քայլեր է ձեռնարկել բուհի կառավարումը արդիականացնելու և այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կարևորելով արդյունավետ կառավարումը, ԵԳՊԱ-ն Եվրոմիության Տեմպուս դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակեց և շահեց դրամաշնորհային եռամյա «Կառավարում» ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում Եվրոպական մի շարք առաջատար բուհերի հետ համագործակցության շնորհիվ (Լյուվենի համալսարան (Բելգիա), Բաֆ Սպա համալսարան (Մեծ Բրիտանիա), Կոբլենց-Լանդաուի համալսարան (Գերմանիա), ինչպես նաև ASIIN հավատարմագրման գործակալություն (Գերմանիա) կարդիականացվեն կառավարման մոտեցումները: ԵԳՊԱ-ն այս ծրագրի համակարգողն է, ինչը իր հերթին, կնպաստի բուհի ներուժի զարգացմանը: Ծրագիրը նպատակ ունի փոփոխություններ իրականացնել բուհի կառավարման երեք մակարդակներում՝

- կառավարման վերին օղակ, վարչակազմ,
- ղեկաններ և ամբիոնների վարիչներ,
- ուսումնական վարչություն:

2014 թվականի հունվարի 15-ից 16-ը տեղի ունեցավ եվրոպական փորձագետների առաջին այցը ԵԳՊԱ, որն ազդարարեց «Կառավարում» ծրագրի պաշտոնական մեկնարկը: 2014 թվականի ընթացքում եվրոպական փորձագետների կողմից կատարվեց նաև մի շարք վերապատրաստումներ:

Ակտիվ գործունեություն է ծավալում 2013 թվականին ստեղծված «Մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման» կենտրոնը: Կենտրոնի աշխատանքների շրջանակներում ներդրվում է «Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը», որը տեղեկատվության հավաքագրման հուսալի միջոց է: Այս համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ ճիշտ ժամանակին հավաքագրված և արժանահավատ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար:

«Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ում զետեղված տվյալները ժամանակին թարմացնելու և այդ համակարգում չընդգրկված, սակայն կատարվող վերլուծությունները ավելի ամբողջական դարձնելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն



հավաքագրելու նպատակով մշակվել է նաև ԵԳՊԱ տվյալների բազայի նախագիծ, որը կապահովի էլեկտրոնային ֆորմատով տեղեկատվության հավաքագրումը ԵԳՊԱ-ի բոլոր ստորաբաժանումներից: ԵԳՊԱ տվյալների բազան նախատեսվում է ներդնել 2015 թվականի ընթացքում:

Տեմպուսի «ՀԵՆ-ԳԵԱՌ» ծրագրի շրջանակներում ստեղծվել և այժմ փորձարկման փուլում է գտնվում ԵԳՊԱ շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորման և ապահովման էլեկտրոնային հարդակը, որի բազայում արդեն իսկ գրանցված են 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների 97% (238 շրջանավարտ):

Հետազոտությունների իրականացման ոլորտում կառավարման համակարգի բարելավման նպատակով 2014 թվականին ԵԳՊԱ-ում ստեղծվեց «Հետազոտական կենտրոն», որի հիմնական գործառույթներն են՝

- հետբուհական կրթական ծրագրերի բարելավումը և համապատասխանեցումը եվրոպական համարժեք ծրագրերին, աշխատաշուկայի արդի պահանջներին և ՀՀ որակավորումների ազգային շրջանակին,
- ԵԳՊԱ-ում իրականացվող գիտական հետազոտությունների համակարգումը և դրանց միջազգայնացման ապահովումը,
- ԵԳՊԱ գրադարանի թվայնացումը և շարունակական զարգացումը:

Բացի այդ, ակտիվ աշխատանքներ են տարվել դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ՝ միտված անձնակազմի տարբեր մակարդակների ներուժի զարգացմանը: Ներկայումս ԵԳՊԱ-ն մասնակցում է Տեմպուսի վեց ծրագրում, որոնցից մեկի ղեկավարն է հանդիսանում: Դրանք են.

- **ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (GOVERN)**. միտված է Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան բուհերի կառավարման համակարգի վերանայմանը: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	Ռեկտորների և պրոռեկտորների վերապատրաստում	WUS	13-17 հունիս, Գրաց, Ավստրիա
2	Դեկանների և ամբիոնի վարիչների վերապատրաստում	KHLeuven	6-9 Հոկտեմբեր, Լյուվեն, Բելգիա
3	Ուսումնական մասի վերապատրաստում	CESIE	12-14 Նոյեմբեր, Պալերմո, Իտալիա



- **ՊԻԿԱՍԱ (PICASA).** միտված է բուհի տարբեր գործընթացների միջազգայնացմանը: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	Ինչպես պլանավորել միջազգայնացումը	WUS	28.05.2014-30.05.2014, Գրաց, Ավստրիա
2	Ինչպես ինտեգրել միջազգայնացումը ուսման և հետազոտության մեջ	KHL	18.06.2014-20.06.2014, Լյուվեն, Բելգիա
3	Միջազգային կապերի բաժնի աշխատանքի բարեփոխումներ	Գենոայի համալսարան	24.11.2014-26.11.2014, Գենոա, Իտալիա

- **ՎԵՐԻՏԱՍ (VERITAS).** միտված է Զալցբուրգի սկզբունքների հիման վրա Որակավորումների ազգային շրջանակ-ի 8-րդ մակարդակի (հետազոտող) կառուցվածքային զարգացմանը: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	Զալցբուրգյան սկզբունքների ուղղությամբ վերապատրաստում	WUS	05.05.2014-07.05.2014, Գրաց, Ավստրիա
2	Աշխատաժողով երրորդ կրթական աստիճանի իրականացման համար խթանման գործիքների մշակման ուղղությամբ	WUS, KTH	16.06.2014-18.06.2014, Երևան, Հայաստան
3	Աշխատաժողով երրորդ կրթական աստիճանի իրականացման համար ճանապարհային քարտզների մշակման ուղղությամբ	UHMF	03.11.2014-05.11.2014, Հայդելբերգ, Գերմանիա

- **ԸԼՍՅՆ (ALIGN).** միտված է մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության խթանմանը: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1.	Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանությունը ապահովելու նպատակով	KU	29.09.2014 – 03.10.2014, Գենթ, Բելգիա



	բարձրագույն ուսումնական հաստատությունների անձնակազմի վերապատրաստում		
2.	Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանությունը ստուգելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատությունների անձնակազմի և որակի արտաքին ապահովման կառույցների անձնակազմի վերապատրաստում	IADT	08.12.2014 – 11.12.2014, Դուբլին, Իռլանդիա

- **ՀԵՆ-ԳԵԱՌ (HEN-GEAR)**. միտված է շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորմանը և ապահովմանը;

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1.	Հայաստանի շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրության մեթոդոլոգիայի և ռազմավարության նախագծում	UMINHO	30.03.2014-03.04.2014, Բրագա, Պորտուգալիա

- **ԷՍՊԱՎ (ESPAQ)**. միտված է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը:

Ինչպես երևում է, Տեմպուսի բոլոր վեց ծրագրերը միտված են բուհի տարբեր ոլորտներում կառավարման զարգացմանը և բարեփոխումների խթանման համար լավագույն միջոց են:

ՆՊՍՍՄԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2014-2015 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է ըստ ԵԳՊԱ-ի մասնագետների կողմից մշակված և ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված



առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2014-2015 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է ըստ «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: 2014-2015 ուսումնական տարվա ԵԳՊԱ դիմորդների բաշխումը ըստ մասնաճյուղերի հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	157
Գյումրի	45
Դիլիջան	7

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	99
Գյումրի	5

Մրցույթի արդյունքում ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	43	99	142
Գյումրի	12	29	42
Դիլիջան	3	3	6

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	21	37	58
Գյումրի	2	3	5



ԵԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	196	374	570
Գյումրի	43	92	135
Դիլիջան	13	8	21

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	42	81	123
Գյումրի	4	8	12

Բ. Ուսումնական գործընթացներ

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ հարկ է նշել, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Հատկապես.

- Մշակվել է առարկայական ծրագրերի նոր ձևաչափ՝ հաշվի առնելով արդյունահեն ուսուցման մոտեցումները:
- Մշակվել է մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ:
- Կատարվել է ԵԳՊԱ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում՝ «Ուսումնառության արդյունքները և կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS)» թեմայով:
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ԵԳՊԱ-ի բոլոր մասնագիտությունների ուղղությամբ առաջին և երկրորդ կուրսերում դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերը վերանայվել են ըստ նոր մշակված ձևաչափի: Վերանայված առարկայական ծրագրերում սահմանվել են նաև տվյալ ծրագրերին բնորոշ ուսումնառության արդյունքները:

Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների հիման վրա վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը, գնահատման համակարգը և մշակված ընթացակարգերը՝ մշակվել է ուսանողի ձեռնարկ:



Ավելին, ԵԳՊԱ-ն ՀՀ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում միջազգային չափորոշիչներին համապատասխան հիմնովին լրամշակում է չորս մասնագիտության կրթական ծրագիր՝ «Դիզայն», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Կիրառական արվեստ», «Հագուստի մոդելավորում»: Ներկայացված ծրագրի շնորհիվ ամբողջովին վերազինվում են չորս համապատասխան լաբորատորիաները: Հագուստի մոդելավորման, համակարգչային նախագծման և կիրառական արվեստի լաբորատորիաները արդեն իսկ ամբողջովին վերազինվել են (սարքավորումների ցանկը տես՝ հավելված 1-ում), իսկ մանրակերտի լաբորատորիայի վերազինումը կավարտվի 2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում: Ծրագրի ավարտին այս մասնագիտությունները պատրաստ կլինեն թե՛ ազգային, թե՛ միջազգային հավատարմագրմանը:

Գ. Որակավորումներ

Իրականացվող մասնագիտությունները Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ԵԳՊԱ-ում շարունակում է գործել մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայող հանձնաժողով, որը զբաղվում է ուսումնառության վերջնարդյունքների մշակմամբ: Այդ հանձնաժողովի աշխատանքների շրջանակը ենթադրում է ՄԿԾ-ների վերանայում և շուկայի պահանջներին համապատասխանեցում: Այդպիսի մոտեցումը կերաշխավորի ԵԳՊԱ-ի և մասնաճյուղերի կողմից առաջարկվող մասնագիտությունների ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցումը ՈԱՇ-ին, ինչը դյուրին կդարձնի բուհի ինտեգրումը Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին:

ՆՊԱՏԱԿ III. Որակի ապահովում

Որակյալ կրթություն տրամադրելու համար արդեն երրորդ տարին է, ինչ ԵԳՊԱ-ն մշակում է որակի ապահովման համակարգ թե՛ սեփական նախաձեռնությամբ, թե՛ Տեմպուսի ու Համաշխարհային բանկի միջոցներով: ՀՀ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում անցկացվում է որակի



ապահովման համակարգի ներդրում: ԵԳՊԱ-ի բյուջեից նույնպես հատկացվել են որոշակի միջոցներ՝ որակի ապահովման նախաձեռնություններին օժանդակելու նպատակով:

Ուսումնական գործընթացների որակը բարելավելու նպատակով գործում է ինքնավերլուծություն իրականացնող հանձնաժողով: Ինքնավերլուծության աշխատանքներն արդյունավետ և հավաստի իրականացնելու նպատակով ՈԱ կենտրոնը անցկացրել է մի շարք հարցումներ՝ շահակիցների շրջանում ակադեմիայի աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար: Մասնավորապես.

- ԵԳՊԱ ՄԿԾ-երի, ռեսուրսների և վարչարարության արդյունավետությունը գնահատող հարցում՝ շրջանավարտների շրջանում:
- Գնահատման նոր համակարգի վերաբերյալ հարցում՝ նոր համակարգով գնահատում կատարած դասախոսների շրջանում
- ԵԳՊԱ կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատում՝ հարցում դասախոսների շրջանում
- Դասընթացի արդյունավետության գնահատում՝ պիլոտային հարցում ուսանողների շրջանում («Կոմպոզիցիա» առարկա)
- Ուսանողների կողմից ԵԳՊԱ վարչարարության և կառավարման արդյունավետության գնահատում /ֆոկուս խումբ/
- ԵԳՊԱ հրապարակայնության վերաբերյալ հարցում՝ դիմորդների շրջանում

Աշխատակիցների կատարողականի գնահատման և բարելավման ուղղությամբ ԵԳՊԱ-ում մշակվել և փորձարկվել է նաև աշխատակիցների կատարողականը գնահատող գործիք: Հաշվի առնելով հարցումների արդյունքների վերլուծությունները՝ պատրաստվել է ԵԳՊԱ-ի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գեկույցի նախնական տարբերակը, որը կներկայացվի ակադեմիայի ներքին շահակիցների կարծիքին և հետադարձ կապի արդյունքների հիման վրա կվերջնականացվի 2015 թվականին:



ՆՊԱՏԱԿ IV. Հետազոտություն

Հետազոտության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են բավականին լուրջ աշխատանքներ: ԵԳՊԱ-ի դասախոսների կողմից հայաստանյան և միջազգային գիտական ժողովածուներում և հանդեսներում հրատարակվել են շուրջ 80 գիտական հոդվածներ, հրատարակվել է 2 մենագրություն: Հրատարակվել է ԵԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների հերթական ժողովածուն:

Ակադեմիան 2104 թվականից մասնակցում է ՏԵՄՊՈՒՍ-ի VERITAS «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 բարձրագույն ուսումնական հաստատություններ և կրթական կառույցներ ինչպես Հայաստանից, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներից: Ծրագրի առաջին տարվա ընթացքում արվեստագիտության ոլորտի առանձնահատկությունների հիման վրա կատարվել է վերլուծություն, ապա մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ՝ հետազոտողի ծրագրի բարելավման ուղղությամբ:

2014թ. ակադեմիայի կառուցվածքում ստեղծվել է հետազոտական կենտրոն: Կենտրոնի գործունեությունը կնպաստի արվեստի ոլորտում որակյալ մասնագետների պատրաստմանը, հետազոտական միջավայրի բարելավմանը, ակադեմիայի հետազոտական աշխատանքի միջազգայնացմանը, ԵԳՊԱ-ի գրադարանի թվայնացմանը:

Ակադեմիան մշակույթի ոլորտում միջազգային կապեր է հաստատել ինչպես առանձին մասնագետների, այնպես էլ հետազոտական մի քանի կենտրոնների հետ, որի շրջանակներում կատարվել են հետևյալ միջոցառումները: «Աշխարհայացքների պատմություն» առարկայի շրջանակներում ԵԳՊԱ է հրավիրվել և 1 կիսամյակ դասավանդել է Բուալիայից փիլիսոփայական գիտությունների դոկտոր, արվեստագետ՝ Լեոնարդո Ֆիլաստոն:

«Հայ գաղթօջախների մշակույթը» թեմայով զեկուցում է կարդացել հայազգի անվանի պատմաբան, հայագետ, մաթեմատիկոս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր՝ Կլոդ Մուրաֆյանը:

Լատինամերիկյան ժամանակակից արվեստին նվիրված դասախոսությունների շարքով հանդես է եկել արգենտինահայ երիտասարդ արվեստաբան Պատրիսիո Դեր Քրիքորյանը:



Ընթացիկ տարում ակադեմիայի արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի մի շարք դասախոսներ զեկուցումներով հանդես են եկել Գերմանիայում (Վ.Ազատյան), Ֆրանսիայում և Արևմտյան Հայաստանում (Դ.Քերթմենջյան), Վրաստանում (Ս.Արզումանյան), Երևանում (Ն.Ղարիբյան) կազմակերպված միջազգային գիտաժողովներում:

2014 թվականը արդյունավետ է եղել նաև երիտասարդ հետազոտողների համար: Ակադեմիայի 3 ասպիրանտ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները, ստացել են արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան և շարունակում են իրենց հետազոտական աշխատանքն ակադեմիայում՝ այժմ արդեն դասախոսի կարգավիճակում: Կայացել է արտասահմանցի 2 ասպիրանտների (Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների) ատենախոսությունների նախապաշտպանություն և գործերը համապատասխան ամբիոնի դրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ՝ պաշտպանության:

Ներկայում ակադեմիայում սովորում է 5 ասպիրանտ և 1 հայցորդ:

ՆՊԱՏԱԿ V. Միջազգային կապեր

Միջազգային հարաբերությունների ուղղությամբ ԵԳՊԱ-ն ծավալել է ռազմավարական ուղղությունների իրականացմանը միտված հետևյալ աշխատանքները՝

- ուսանողների շարժունությունն ապահովող ծառայությունների տրամադրում,
- կրթաթոշակների և այլ դրամաշնորհային ֆոնդերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- միջազգային համագործակցություն այլ կազմակերպությունների և բուհերի հետ,
- միջազգային ծրագրերի իրականացում,
- ԵԳՊԱ-ի մասնակցություն տարբեր ցուցահանդեսներում, արվեստի հետ կապված այլ միջոցառումներում:


Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով մշակվել է՝ «ԵԳՊԱ փոխանակման ծրագրերով արտասահմանյան գործընկեր բուհեր մեկնող ուսանողների շարժունության կարգ»-ի նախագիծը, որը վերջնականապես կհաստատվի 2015 թվականի առաջին եռամսյակում:



Համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել՝ Ֆրանսիայի Լե Մանս-Տուր-Անժերի արվեստի բարձրագույն դպրոցի, Բելառուսի գեղարվեստի ակադեմիայի և Պերուջիայի օտարերկրյա ուսանողների մշակույթի և լեզվի ինստիտուտի հետ:

Նախորդ տարիների համեմատ նկատվում է արտասահմանցի դիմորդների հոսքի նվազում: Արտասահմանցի ուսանողների հոսքը մեծացնելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ, ինչի ուղղությամբ ԵԳՊԱ-ն նախաձեռնել է համապատասխան քայլեր ՊԻԿԱՍՍ դրամաշնորհային ծրագրի և Համաշխարհային բանկի ծրագրի միջոցով:

Ընդհանուր առմամբ, 2014-15 ուս.տարվա արտասահմանցի ուսանողները կազմում են 6 %, որից 3%-ը Ասիայից, 2%-ը՝ ԱՊՀ երկրներից, 1%-ը՝ Եվրոպայից:



Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ ուսանողների փոխանակումը հիմնականում ընթանում է Ֆրանսիական ուսումնական հաստատությունների (Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց, Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց, Լիոնի գեղարվեստի ազգային դպրոց), Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվ. գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայի հետ, առկա ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում: 2014-15 ուս. տարվա 1-ին կիսամյակում, նշված համաձայնագրերի շրջանակներում, ուսումը շարունակելու նպատակով 1 ուսանող մեկնել է Մարսելի արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց (Ֆրանսիա), 2-ը՝ Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա (Իտալիա), 2-ը՝ Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (Ռուսաստան): 2014-15 ուս. տարվա 2-րդ կիսամյակում 2 ուսանող մեկնելու են Մարսելի արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց (Ֆրանսիա) և 2 Սանկտ-



Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (Ռուսաստան):

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով 2014 թվականի դեկտեմբերի դրությամբ գործում են պայմանագրեր արվեստի օտարերկրյա 18 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը: Միջազգային համագործակցությունը հիմնականում տեղի է ունենում Ֆրանսիայի, Չեխիայի, Իտալիայի, Սլովակիայի, Լատվիայի, Էստոնիայի, Գերմանիայի և ԱՊՀ երկրների հետ:

2014 թվականին ԵԳՊԱ-ի կողմից ՀՀ-ում կազմակերպվել է Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայի ուսանողների պլեներային պրակտիկան: Պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կատարված աշխատանքները ցուցադրվել են ակադեմիայի պատկերասրահում՝ «Հայաստանյան գույներ» խորագրով ցուցահանդեսի ժամանակ:

Հաշվետու տարում ԵԳՊԱ-ի պատկերասրահում տեղի ունեցավ նաև Թբիլիսիի արվեստի ակադեմիայի ուսանողների և դասախոսների աշխատանքների ցուցադրությունը:

Կարևոր միջոցառումների թվին կարելի է դասել նաև ճապոնացի արվեստագետ, պրոֆ. Կունիտո Նագատկայի գլխավորությամբ կազմակերպված վորքշոփը և Նորատուսում կազմակերպված վարպետության դասընթացները՝ նվիրված խաչքարերի սիմվոլների պատճենահանման տեխնիկային:

ՆՊՍՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերի ոլորտում 2014 թվականի ընթացքում իրականացվել են 54 ցուցահանդեսներ ու միջոցառումներ ԵԳՊԱ-ում, Գյումրու ու Դիլիջանի մասնաճյուղերում և այլ վայրերում: Դրանցից հատկապես կարևոր է նշել հետևյալ ցուցահանդեսները.



1. Սանկտ-Պետերբուրգի Ալեքսանդր Շտիգլիցի գեղարվեստական-արդյունաբերական պետական ակադեմիայի ուսանողների «Հայաստանյան գույներ» ցուցահանդեսը:
2. «Ֆրանկոֆոնիայի օրեր» մեկամսյակի շրջանակներում «Ֆրանսիան հայի աչքերով» խորագիրը կրող ցուցահանդեսը:
3. Թբիլիսիի արվեստի պետական ակադեմիայում տեղի ունեցած “ԵԳՊԱ-ի արվեստը Թբիլիսիում” Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը:
4. ԵԳՊԱ-ի մի խումբ երիտասարդ քանդակագործների նախաձեռնած «Էմանացիա» քանդակի ցուցահանդեսը՝ Նկարիչների միության սրահում:
5. «Ով ենք մենք՝ որտեղից ենք գալիս և ուր ենք գնում...» ԵԳՊԱ Գյումրու մասնաճյուղում 3 օր շարունակ անցկացված «ՌեԱնիմանիա» Երևանի 6-րդ միջազգային անիմացիոն կինոփառատոնը:

Միջոցառումներից ուշադրության արժանի են.

1. ՀՀ Կրթության և գիտության նախարարության պաշտոնական աջակցությամբ Երևանում բացված «Կրթություն և կարիերա 2014» ցուցահանդեսը, որի մասնակցության համար ԵԳՊԱ-ն ստացավ վկայական:
2. ԵԳՊԱ-ում քանդակագործ, գրաֆիկ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ և ՌՖ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Արա Հարությունյանի անվան արվեստանոցի բացումը:
3. Էդուարդ Իսաբեկյանի 100-ամյա տարելիցին նվիրված ցուցահանդեսներն ու միջոցառումները:

ԵԳՊԱ-ի և նրա մասնաճյուղերի 2013-2014 ուս. տարվա դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները նկարահանվել են պատկերների և տեսահոլովակների ձևով: Նյութերը մշակվել են համակարգչային գրաֆիկական ծրագրերով և օնլայն ներկայացվել հանրությանը:

ՌՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2014 թվականին ՀՀ-ում ներդրվեց բուհերի ազգային վարկանիշավորման համակարգը, որի նպատակներն են.

- բարձրացնել բուհերի միջև մրցակցությունը և դրանց հաշվետվողականությունը;



- ընդլայնել բուհական համակարգի շահառուների՝ ուսանողների, դիմորդների, գործատուների և այլ սոցիալական խմբերի, բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորությունները և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ;
- բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների ընդունման արդյունավետությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Վարկանիշավորումը իրականացվել է ըստ բուհերի գործունեության հետևյալ ուղղությունների՝ ուսանողներ, ուսումնառության արդյունքներ, միջազգային ուղղվածություն, գիտահետազոտական աշխատանք, դասավանդման գործընթաց, հաստատության կարողություններ, աշխատանքային շուկա, համալսարանական շինություններ:

ՀՀ բոլոր պետական և մասնավոր բուհերը բաժանվել են 6 խմբերի: Դրանք են՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
6. Արվեստի բուհեր

ԵԳՊԱ-ն հանդիսանալով ՀՀ կերպարավեստի ոլորտի առաջատար բուհ ընդգրկվել է 6-րդ վարկանիշային խմբում և վարկանիշավորման արդյունքներով զբաղեցրել է 1-ին տեղը, ինչը վկայում է վերջին տարիների գործունեության բարձր արդյունավետության և կրթության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունավետության մասին: Վարկանիշավորման չափանիշներին և արդյունքներին կարելի է ծանոթանալ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքէջում՝ <http://ranking.armedu.am/>:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով պետական հաստատություն և ձևավորելով բյուջեն թե՛ պետական և թե՛ հասարակության կողմից տրամադրվող ֆինանսներից՝ ԵԳՊԱ-ն այդ ֆինանսները բաշխելիս հաշվետու է հասարակությանը և կառավարությանը:

2014 թվականին ԵԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ. բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ԵԳՊԱ-ի ծախսերը կատարվում են ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով ամբիոններից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, քաղաքից դուրս էտյուդների կազմակերպման համար: Բժշկական ապահովագրություն ունեցող բոլոր աշխատակիցների համար ակադեմիան վճարվում է ապահովագրական գումարի 40%-ը:

ՄՈՒՏՔԵՐ



458.744.667 ՀՀ դրամ

1	Պետ. բյուջե	183.882.500	40%
2	Ուս. վճար	256.775.133	56%
3	Նախապատրաստական	13.373.434	3%
4	Այլ մուտքեր	4.713.600	1%

ԾԱԽՍԵՐ

465.047.000 ՀՀ դրամ

1	Աշխատավարձ	385.697.000	89%
2	Պետական հարկեր	3.939.000	0.9%
3	Գնումներ	8.244.300	1.9%
4	Ծառայություններ	49.004.240	11.3%
5	Գործուղում	2.844.800	0.7%
6	Կրթաթոշակ	14.115.500	3.3%
7	Այլ ծախսեր	1.202.160	0.3%



Ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար 2014 թվականին ԵԳՊԱ-ի առաջին և երկրորդ մասնաշենքերում կատարվել են շենքի պահպանման աշխատանքներ, ԵԳՊԱ-ն համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու մասնաճյուղի ֆինանսատնտեսական գործառնությունները վարվում են տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում անհրաժեշտ ծախսեր են՝ աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ,



ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 81%-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաները, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարումներ են կատարվում գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում է, որ մասնաճյուղն իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:


Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՀՀ նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում 2014 թվականի դրությամբ ԵԳՊԱ-ում իրականացվող «Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում» և «Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ենթածրագրերի սահմաններում ԵԳՊԱ-ի ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ

65.055.500 ՀՀ դրամ

1	«Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում» ծրագիր	3.933.500	6.05%
2	«Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ծրագիր	61.122.000	93.95%






ԾԱԽՍԵՐ

57.815.765 ՀՀ դրամ

1	«Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում» ծրագիր		
1.1	Միջազգային և տեղական փորձագետների խորհրդատվություն	3.000.000	5.19%
1.2	Փորձագետների աշխատաժողով	420.000	0.73%
1.3	Գրենական պիտույքներ	513.500	0.89%
2	Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ծրագիր		
2.1	Փորձագիտական խմբերի աշխատավարձ	21.660.500	37.46%
2.2	Լաբորատոր սարքավորումներ	32.221.765	55.73%






ԵԳՊԱ-ում ներկայումս իրականացվող «ԳՈՎԵՌՆ», «ՎԵՐԻՏԱՍ», «ԸԼԱՅՆ» և «ՊԻԿԱՍԱ» Եվրոմիության ՏԵՄՊՈՒՄ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2014 թվականի ընթացքում ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ

47.384.398 ՀՀ դրամ

1.	ԳՈՎԵՌՆ	19.311.795	40.76%
2.	ՎԵՐԻՏԱՍ	8.316.147	17.55%
3.	ԸԼԱՅՆ	9.143.626	19.30%
4.	ՊԻԿԱՍԱ	6.309.170	13.31%
5.	ՀԵՆ-ԳԵԱՌ	4.303.660	9.08%






ԾԱԽՍԵՐ

29.403.508 ՀՀ դրամ

1.	ԳՈՎԵՌՆ		
1.1	Ճանապարհածախս	10.879.077	37.1%
1.2	Աշխատավարձ	4.255.825	14.47%
1.3	Այլ ծախսեր	4.176.892	14.2%
2.	ՎԵՐԻՏԱՍ		
2.1	Ճանապարհածախս	2.441.960	8.3%
2.2	Աշխատավարձ	218.916	0.74%
3.	ԸԼԱՅՆ		
3.1	Ճանապարհածախս	3.557.587	12.1%
4.	ՊԻԿԱՍԱ		
4.1	Ճանապարհածախս	2.315.166	7.87%
5.	ՀԵՆ-ԳԵԱՌ		
5.1	Աշխատավարձ	1.558.085	5.31%





Այսպիսով, 2014 թվականի ընթացքում ԵԳՊԱ-ի մուտքերը բոլոր ֆինանսական աղբյուրներից հետևյալն են.


ՄՈՒՏՔԵՐ

571.184.565 ՀՀ դրամ

1.	ԵԳՊԱ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ	458.744.667	80.31%
2.	ՀՀ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագիր	65.055.500	11.39%
3.	Եվրամիության ՏԵՄՊՈՒՄ դրամաշնորհային ծրագրեր	47.384.398	8.3%

ՄՈՒՏՔԵՐԸ ԲՈԼՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

- ԵԳՊԱ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ
- ՀՀ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագիր
- Եվրամիության ՏԵՄՊՈՒՄ դրամաշնորհային ծրագրեր





ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Սյսպիսով, կարելի է նշել, որ 2014 թվականը եղել է բավականին արդյունավետ թե կառավարման համակարգի, և թե ուսումնական գործընթացի բարելավման տեսանկյունից: ԵԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման ուղղությամբ:

Սակայն, բավականին լուրջ մարտահրավեր են առաջանում, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Չնայած արտաքին աղբյուրներից ռեսուրսների ձեռքբերման հարցում ԵԳՊԱ-ի բոլոր ջանքերին՝ դեռ առկա են շոշափելի խնդիրներ հիմնականում հետևյալ հարցերում՝

- ԵԳՊԱ-ի ֆիզիկական տարածքի վերանորոգում և համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- շենքային պայմանների ընդլայնում:

Ամփոփելով՝ ԵԳՊԱ-ն միշտ պատրաստակամ է և անընդատ ձգտում է բարելավել ուսումնագիտական ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: